

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄԷՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 ՄԷՃ.
Պատուագ 3 ՄԷՃ.
Ամսական մէկ 20 նոյ թիւից ապրումը
ճանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար դատ սովորելով իւր կըլ-
լայ :



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Գաւազ գաւազ լրագրաց ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որեւիցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի : Գաւա-
զ իւր լրագրութեանը հաստատութիւն
1934 Վարդ Խոսեայ Մարտի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 17 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական ներկայ վիճակին
կարեւորութիւնն ինքնաթիւ վարումը
ընդ եւրոպայ ըրած ուղեւորութեան
և մայրաքաղաքի մէջ Գարատաղի
պատուիրակաց Բ. Դրան հետ ըրած
բանակցութեանց վրայ կայացած է :
Անգղիական Տէյլ—Թէլէկրաֆ ը-
րագրոյն Բերայի թղթակիցը Գարա-
տաղի պատուիրակաց միոյն հետ ըրած
մէկ խօսակցութիւնը կը հրատա-
րակէ, որ կրնայ իրաց ներքին վի-
ճակին վրայ լոյս մը սփռել : Գարա-
տաղի պատուիրակը գտնուածներ է
թէ լաւ լուր մը չկրնար տալ : Օսման-
եան կառավարութեան հետ բանակ-
ցած էր, բայց գոհացուցիչ լուծման
յոյս չկար : Բ. Դրանը Գարատաղի
խնդիրներէն մէկ քանին կրնուին
բայց ասոր փոխարէն ինք ալ առա-
ջարկութիւններ կրնէ զորս Գարա-
տաղիք չեն կրնար ընդունիլ : Գա-
րատաղի տխուր դէմքով Բ. Դրան
ամբաստաններ է, որպէս թէ խաղա-
ղութիւն ընել չուզեր, և ծանուցեր
է թէ պատերազմը պիտի շարունակի :
« Բոլոր Եւրոպայ, ըսեր է, կրնայ պա-
տերազմին խառնուիլ : մեր ամեն
ջանքն է գործ գրինք : մեր փափաքը
խաղաղութիւնն էր, բայց պատերազմն
անհրաժեշտ է : ասկէ աւելի բան մը
չենք կրնար ընել : »

Գարատաղի պատուիրակը պա-
տերազմի հաւանականութեան վրայ
խնդրութեամբ չէր խօսեր, « Մեք ետ
պիտի դառնանք, ըսեր է. հոս բան
մը չպիտի կրնանք ընել քանի որ Օս-
մանցւոյ պահանջներն ընդունիլ ան-
կարելի է մեզ : » Ահա երբ Սերվիայի
պատուիրակները տէրութեան կողմէն
զրկուած կառքերը նստած վսեմ
Սաֆիէթ փաշայի ապարանքը կոչու-
նքի կերթային, Գարատաղի պատ-
ուիրակները կը դժգոհէին թէ չէին
կրցած համաձայնիլ Բ. Դրան հետ :
Սերվիայ պատուիրակներէն Պ. Բրի-
թիլի քանի մ'օր տակաւին մայրա-
քաղաք մնալուն պատճառը կերեւի
որ Բ. Դրան և Գարատաղի պատուի-
րակաց մէջ բարեկամական միջնոր-
դութիւն մ'ընելու համար էր : Գա-
րատաղի պատուիրակներէն մին ըսեր
է որ եթէ Նիքսիլ և Շքօտրայի լճին
վրայի երկու կղզիները Գարատաղի
չարուին, գոհացուցիչ կերպիւ խըն-
դէրը չկրնար կարգադրել : Թէպէտ
և խաղաղութիւն ալ հաստատուի,
յարբեր է, տեական չկրնար ըլլալ, և
իրօք անօդուտ է : Գարատաղիներն
իրաւամբ դժգոհ պիտի ըլլան երաշ-
խաւորութիւն մը չպիտի գտնուի որ
ամեն վայրկեան իրենց համար դժ-
ուարութիւններ չենեն : Իշխան և
Իւր իորհրդակցներն երկրակալու-

թեան փափաք չունին : Իրենց բազ-
մանքը միմիայն կ'ընտրու խնդիրները
լուծել է : Օսմանցիք Նիքսիլը Պօս-
նիոյ և Հէրսէքի բանալին է կրնան և
չեն ուզեր տալ զայն, բայց պահպան
չեն Գարատաղի կը կարծէ թէ պատե-
րագին ժամանակ Նիքսիլ աւելի
դժուարութիւն տուաւ Օսմանեան զօ-
րաց քան թէ օգուտ : Սերվի նաւա-
հանգիստին բնակիչները Գարատաղ-
ցիներ են, որոց պէտք է այն և վեր-
ջապէս Գարատաղիք չափազանց պա-
հանջուներ չեն ըներ : Դեպքանա-
խօրհուրը Գարատաղի համար վեց
նահանգ կը պահանջէր, Գարատաղ
հիմայ միայն երկուք կը խնդրէ, ու-
րեմն չափազանց պահանջողութիւն
ներ չըներ : Գարատաղի նպատակն
իրենց ապրուստը ծածկել, սահման-
ներն ուղղել, և ճանապարհները կար-
գադրել է եղեր, որպէս զի ժողո-
վրդեան վիճակը բարւոքի : Շքօտ-
րայի լճին մէջ գտնուած կղզիներն
ազատ նաւարկութեան համար պէտք
են եղեր : Ուստի ազդեցութիւնը
Գարատաղի վրայէն վերջնելու համար
անոր օգնել պէտք էր : Գարատաղիք
վերջին տուրիստ աղքատ են, և երբ
իրենց հարստութեան միջոցներ արը-
ուի, ազատ առևտրով, այն ատեն
իրենց դժգոհութեան պատճառները
պիտի վերանան : Եթէ այս չորհրդէն
ըլլան, Գարատաղիք ոչ ևս պարա-
ւելի ընթացիկ մէջ պիտի գտնուին
եղեր : Բայց առայժմ Մուխթար փա-
շայի և Կոստան փաշայի բանակցու-
թեանց խառնուիլն ըստ Գարատաղի
պատուիրակաց հաշտութեան երաշ-
խաւորութիւն չէ : մանաւանդ Մուխ-
թար փաշայէն կը դանդաղան, թէ ի-
րենց հետ հակակրօնութեամբ կը վար-
ուի : Դիւրեղ պատուիրակները կը
յայտարարեն թէ իրենք ինչ որ բա-
յարձակապէս պէտք է՝ զայն կը պա-
հանջեն, առանց դեպքանախօրհուր-
կողմէ իրենց իբրև իրաւացի բաժին
հանած բաները խնդրելու : Ասոնք
էին ահա Գարատաղի պատուիրակ-
ւորաց առաջարկութիւնները :

Տէյլ—Թէլէկրաֆի թղթակիցը ինդ-
րոյն Օսմանեան կողմն ալ կը նկարագ-
րէ Օսմանեան պաշտօնատարի մը բեր-
նէն : « Գարատաղիներն, ըսեր է վեր-
ջինը, իրենց պահանջումներէն մէկ
քանին է բայց թողուցած են, բայց
կրցածնուն չափ կը պահանջեն դարձ-
եալ : Կըյայտարարեն թէ աղքատ են,
բայց երբ կ'ըսուի իրենց թէ Հէրսէքը
տալ անկարելի է, կը ծանուցանեն
թէ պատերազմը պիտի շարունակեն :
Երբ Օսմանցիք ըսեն իրենց թէ պա-
տերազմը դարձեալ սկսած ժամանակ
իրենց երկիրը պաշարուելով կրնան
հնազանդութեան պարտաւորել, պար-
զապէս կը ծիծաղեն և կրնան թէ ի-
րենց զօրաց պէտք եղած պաշարն
ունեն : Իրենց բոլոր քաղաքականու-
թիւնը Բուսիոյ դրդ մամն է, և կէ-

րեակցիներ թէ թուրքի աշխարհապա-
նապալի վիճակի մէջ է որ հարկաւ
հաշտութիւն պիտի ընէ : Ստոյգ է
որ Օսմանցիք ալ թշնամութեանց վերջ
տալու կը փափաքեն, սակայն յիմա-
րութիւն է կարծել թէ անպատու հաշ-
տութեան մը կը հաւանեն : Եթէ Գա-
րատաղիք առաջարկութիւններն ըն-
դունուին, Օսմանեան կառավարու-
թիւնը միշտ Հէրսէքի մէջ ապստամ-
բութիւններ տեսնելու վտանգին մէջ
պիտի գտնուի : Այն ատեն Նիքսիլ
ձեռքէ ելած ըլլալով, ապստամբնե-
րը զսպել աւելի դժուար պիտի ըլ-
լայ : Շքօտրայի լճին մէջ գտնուած
կղզիները Գարատաղիք ձեռքն ըլ-
լալով, Օսմանեան զօրքն ամեն տե-
սակ վտանգներու ենթակայ պիտի
ըլլայ : Սերվի նաւահանգիստը ձեռք
ձգելով Նիքսիլը իշխան և իւր ժո-
ղովուրդն ամեն տեսակ զէնք և ռազ-
մամթերք կրնան անկից ստանալ և
ապստամբաց դրկել : Իսկ երբ Գարա-
տաղիք հետ պատերազմ պատահի,
իրենց ձեռքը Նիքսիլի և Սերվի նը-
ման երկու բերդ, երկու ամուր կըլ-
զի, և պաշտպանողական պատերազ-
մի յարմար երկու նահանգ պիտի
գտնուի : Այս ամենն տեսնել տալ կա-
րելի է : Եթէ Գարատաղիք յաղ-
թութիւններ ըրին, ըստի, Օսմանեան
զօրքն ալ Սերվի կողմէն յաղթած էր,
այսու ամենայնիւ Սերվիայիք բան
մը վրայ չտուին, և Բ. Դրանը Պէլ-
կըրատ գործակատար մը դնելու ա-
ռաջարկութեան վրայ ալ չպիտի :
Եթէ Գարատաղիք կը կարծեն թէ
դեպքանախօրհուրն առաջարկու-
թեանց պատճառաւ իրենց խնդիր-
ները Բ. Դրանէն կրնան ընդունուիլ,
կը սխալին : Օսմանեան կառավարու-
թիւնը չափաւոր զիջումներ կրնէ,
սակայն Գարատաղիք պահանջած
տեղերը չկրնար տալ :

Այսպէս խօսել է Օսմանեան պաշ-
տօնատար մը և որովհետեւ Գարա-
տաղիք իրենց պահանջէն ետ կե-
ցած չեն, բանակցութեանց խղովմը
մօտալուտ կերելի է :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՎՈՒՄՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎ

Հրատարակչին հետ 14 մարտի

Ներկայ երեսփոխանաց թիւն էր
իրը 80 : Եսպարքուր, ներքին, դա-
տական և առևտրական գործոց նա-
խարարը և քանի մ'ալ բարձր պաշ-
տօնատար ներկայ էին :

Նախընթաց նստին ատենագրու-
թիւնը կարգադրուել է ընդունուելէ
ետեւ, նախագահ Ահմէտ վէֆիլի է-
ֆէնտին ծանոյց թէ երբեք աղերսա-
գիր եկած էր ժողովին, մէկը հե-
ռադրով, և առաջարկեց որ դիւան

ներուն նախաքննութեանը դրկուի :
Սոյն առաջարկութիւնն ընդունուե-
ցաւ :

Յետոյ ժողովին ներքին կանոնագ-
րութեան 29-րդ յօդուածին վրայ,
որ նախարարաց հարցում ուղղելու
կը վերաբերի, վիճարանութեան շա-
րունակութիւնը ձեռք առնուելով,
Մաքսուտեան Սեպուհ էֆէնտին ա-
տենաբանեց, և իւր եզրակացութիւն
ներն ընդունուեցան ժողովէն, որ էր
հարցման վրայ քուէարկելէ առաջ
նիւթը քննել, և հարցեալ նախարա-
րին հաղորդել, ասկէց դատ հարց-
եալ նախարարին բացատրութեանցը
պատասխանելու իրաւունքը փոխա-
նակ հարցում ուղղող երեսփոխանին
վրայ սահմանափակելու, ամեն երես-
փոխան ալ վրայ ընդարձակել :

Ասկէ ետեւ սկսաւ 32-րդ-ում-
վրայ վիճարանութիւնը, որ նախա-
րարաց պատասխանատուութեան կը
վերաբերի : Այս առթիւ ալ Սեպուհ
էֆէնտի ատենաբանելով առաջարկեց
որ նախարարաց գէմեղած գանդատ-
ները կամ ամբաստանութիւնները 10
— 15 անգամէ բաղկացեալ յատուկ
յանձնաժողով մը միջոցաւ քննուին :
ասկէց դատ պիտի թէ մէն մի երես-
փոխան իրաւունք պէտք է ունենայ
հարցում ուղղելու : Նախարարաց՝ ա-
ռանց կանխաւ ժողովին հաւանու-
թիւնը կամ քուէն տանալու :

Յետոյ կարդը 43-րդ-ում-վրայ
լով որ կը տրամադրէ թէ Պիւսէին
վրայ վիճարանութիւնն ու քուէար-
կութիւնը մէկ նստի մէջ կատարուի,
քանի մը քրիստոնեայ երեսփոխանք,
և գլխաւորապէս խորանեան Մանուկ
էֆէնտի, Մաքսուտեան Սեպուհ է-
ֆէնտի և Ռուբէն էֆէնտի * ատե-
նաբանելով հաստատեցին թէ տէրու-
թեան երւմտից մատակարարու-
թեան ամենակարեւոր և կենսական
խնդիրը մէկ նստի մէջ չկրնար և
պէտք չէ որոշուիլ, այլ քանի մը նիստ
պէտք է նուիրել անոր քննութեանն
ու վիճարանութեանը :

խորանեան Մանուկ էֆէնտիի ա-
տենախօսութիւնը, որ բաւական եր-
կար էր, ինչպէս նաեւ Սեպուհ և
Ռուբէն էֆէնտիներուն խօսքերն հա-
մողիչ ազդեցութիւն մ'ունեցան ժո-
ղովին վրայ : և թէպէտ Ալաշօկը-
տի Յօհաննէս էֆէնտին անոնց յայ-
տարարութիւններն հերքելու փորձ
փորձեց, բայց չկրցաւ յաղթիլ :

Ժողովն յիշեալ յօդուածին վրայ
վիճարանութեան շարունակութիւնն
ուրիշ նստի թողով, անցաւ կանոն

* Գոհութեամբ և մանաւանդ պար-
ծանօք կը տեսնենք որ ժողովին ոչ մահ-
մեաական անդամաց մէջ ամենէն աւելի
Հայ երեսփոխանք կը մասնակցին վիճա-
բանութեան և հանձնարեղ դիտողութիւն
ներ ու օգտակար առաջարկութիւններ
կը ներկայեն : Ման. Խմբ.

նադրութեան միւս յօդուածներուն, և Կէն մինչեւ 50 յօդուածը մէկ երկու մանր բարեփոխութեամբ ընդունուեցան: Իսկ 51 յօդուածին վրայ, որ նախարարաց ուղղեալ հարցմանց պատասխանելու համար տրուելիք պայմանաժամին կը վերաբերէր, վիճարանութիւնն երկարելով նախագահին առաջարկութեամբ յաջորդ նստին թողուեցաւ և ասեանքը փակեցաւ:

Նոյն 15 օրը Կոնստանտնուպոլիս

Սոյն նստին օրակարգին էր վեհ. Սուլթանին պատգամաբերին ի պատասխան պատրաստուած ուղերձին ընթերցումը:

Երբոր այն կէտին հասաւ ուր Պաշմանայ թաղանթաւորութեան խօսքը կայ, նախագահն առաջարկեց Մէշքում բառն աւելցնել, այն է համայն Շեյխ օքէնը:

Այս առաջարկութիւնը միտձայնութեամբ ընդունուեցաւ:

Յետոյ կարգը գալով ուրիշ կէտի մը, ուր վեհ. Սուլթանին համար Վազմանադարական վեհապետ և երկրորդ վերանորոգիչ ըսուած է, Էնթուր բառը վերջինը սրուեցաւ:

Երբոր կարգը պատերազմի վերաբերեալ կէտին եկաւ, օտար միջամտութեան խնդրին յուղուելով, ժողովը միաձայնութեամբ յայտնեց թէ օտարաց միջամտութիւնը կը մերժէ և չընդունիր, այս պարզ պատճառաւ որ մէկն իրաւունք չունի ուրիշի տունը մտնելու:

Հասարակաց կրթութեան կէտին վրայ ալ ժողովը միաձայնութեամբ որոշեց որ այս կարևոր խնդրոյն վերաբերեալ կանոնադրութիւնները ներկայ շրջանին մէջ ժողովին քննութեանը ներկայացուին, առանց գալ տարուան թողլու, ինչպէս որ ըսուած էր կայսերական պատգամաբերին մէջ:

Ապա կարգը Գարատաղի խնդրոյն վերաբերեալ պարբերութեան գալով, նախագահը գիտողութիւն ըրաւ թէ լաւ կըլլար ժողովին կարծիքն իմացնել վեհ. Սուլթանին, այս

տինքն թէ Գարատաղի շնորհուրտներ ընել կողմէ թէ ոչ:

Ասոր վրայ բազմաթիւ խօսք երեսփոխանք անուններն նշանակելու լին հետեւեալ առեր հրապարակային նստին մէջ այս խնդրոյն վրայ խօսելու համար:

Յետոյ յիշեցման կարգն այն կէտին գալով ուր գետնաշարժերը իստքն եղած է, երեսփոխանք գարձեալ յայտարարեցին թէ ռաւար միջամտութիւն ընաւ չեն կրնար ընդունիլ երկրին գործերուն մէջ, և պետութիւն մը պետութիւն չէ երբոր անկախ չէ:

Ուղերձին ընթերցումն աւարտելէ ետեւ ասեանքը վերցաւ:

Կայսերական հրամանաւ

Օսմանեան երեսփոխանական ժողովը նախագահ Ահմէտ վէֆիդէ Էֆէնտիին վէլիբուլետն աստիճան տրուեցաւ:

Մուշի նախարգ կառավարիչ Պաշա Բամփաշան Մարտինի կառավարիչ անուանեցաւ:

Մարտինի նախարգ կառավարիչ Սայիտ փաշան Մուշի կառավարիչ անուանեցաւ:

Երէկ Տոմկոյ Մէվլուտի տօնին տոթիւ վեհ. Սուլթանը հանդիսիւ Սուլթան Ահմէտի մէկիւթը գնաց: Այս պատճառաւ տէրութեան պաշտօնարաններն դուրս ելին:

Կաշնոյ դաւառին Օսմանեան Հայ երեսփոխաններէն մին Մեծ Դանիէլ Էֆէնտի խարածեան, և Սերաստիոյ դաւառին Հայ երեսփոխան Մեծ Յակոբ Էֆէնտի Շահինեան այս շաբաթու Գորիս հասան:

Պատերազմին հաւանականութիւններն աւելալուն վրայ Օսմանեան զրահաւոր նաւախուժն որ Մարմարայի ծովէն ելած էր, վոսիթի ներդրին մէջ կենալու համար Կ. Պոլիս վերադարձաւ:

Կարնոյ կայսերական բանակին հը-

րամանատար Ահմէտ Մուխթար փաշան երեքշաբթի օրը Տրապիզոնի շուրհաւում մեկնեցաւ մայրաքաղաքէս:

Ֆար տիւ Պոսթօր կը ծանուցանէ թէ Պաշմանայ զօրաց հինգերորդ կարգըն ալ ի զէն կոչելու հրաման եղեր է:

Մայրաքաղաքին յոյն լրագիրք կը ծանուցանեն թէ յոյն կին մը Ֆէնէրէն Բերէմիտ մահալլէսի գնացած ժամանակ քանի մը սօֆիսներ տնոր պատիւր բռնաբարեր են:

Իստիւտարի մէջ վերջին օրերոյ գիշերային գողութիւնները շատցած ըլլալով, բնակիչները տեղւոյն ոտիկանութեան անհոգութեան կը գանգատին:

Մայրաքաղաքին Ռուսական թղթատարութեան տնօրէնը մեծագուծար նենգութիւն մ'ընելէ ետեւ մայրաքաղաքէս անյայտ եղած է, և մինչև հիմա չէ կրցած իմացուիլ ո՛ր փախած ըլլալը, թէ և ամեն կողմ հեռագիր զարնուած է:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհնա 26 մարտ

Իկնաթիէֆ զօրավարն այս առաւօտ Վեհնայի Օսմանեան դեսպան Ալէքս փաշան ընդունեց և մէկ ժամ հետը խօսակցեցաւ, ինչպէս նաև Սերվիյ գործակատար Պ. Զիքիքի, որ քառօր մը քովը կեցաւ:

Բեքրապուրի 27 մարտ

Լոնդոնցի եկած լուրերու նայելով, վաղը խորհուրդ պիտի ըլլայ՝ կախ մնացած խնդրոյն վրայ վերջնական որոշում մ'ընելու համար:

Վեհնա 27 մարտ

Իկնաթիէֆ զօրավարն այսօր առանձին տեսակցութեան մ'ունեցաւ կայսեր հետ, որ կէս ժամ տևեց: Յետոյ Անտրափ կոմսին հետ խորհրդակցեցաւ մէկ ժամու չափ:

Իկնաթիէֆ զօրավարն այս երկուսն կայսեր պալատը ճաշեց, և անմիջապէս յետոյ ճանապ ելաւ ի Պէրլին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տաճկաստանի Հայոց յառաջող խնութեան հալածելիքը 1876 տարւոյն մէջ—Լուսթիւն լրագրաց—Փախուսն Կ. Շահնազարեան վարժարանին—Բացումն իկիսանին հընց ի Թեաղանիկէ—Յունաց Սիլոստներն—Վիճակագիր դպրոցաց—Թէ ինչո՞ւ բնական գիտութիւնը և ընդհանուր պատմութիւնն արտաքուստ են զպրոցներէն—Ուսումնական խորհրդոյ վերջին շրջաբերականը—Կոր հրատարակութիւնը—Տարբեր բնական պատմութեան—Առաջնորդ Բնագիտութեան:

(Շաբ. Գե. Բէ. 1932)

Բնական գիտութիւնը բնիք. այս տեղ խնդիր մ'ալ կելնէ մեր առջև, թէ ինչո՞ւ բնական գիտութիւնները մինչև ցարդ դրեթէ բնաւ մուտ գտած չեն մեր դպրոցներուն մէջ. ինչո՞ւ աղքատ չէ հասկցած այս գիտութեանց յարգն ու արժէքը, որք ըստ մեզ՝ թերեւ Գաղղ. և Անգլ. և այլն լեզուներէն ալ աւելի կարեւոր են: Արդարեւ Ժ. Դարու Եւրոպայի պարձանք պատճառող եթէ բան մը կայ, այն ալ բնական գիտութեանց ըրած անհուն յառաջագիժմութիւնն է: Բնական գիտութիւնը բնիքով պէտք է հասկնամք բնապատմութիւնը, որոյ մէջ կը պարունակի կենդանարանութիւն, բուսարանութիւն, երկրաբանութիւն և այլն, բնաբանութիւնն և բնագիտութիւնը: Մէկը որ այս գիտու-

թեանց վրայ գէթ սկզբնական ծանօթութիւն մը չունի, չիրնար այս դարու մարդն համարուիլ, և մեք որ մեր աղայքը կը զրկեմք այսպիսի կարևոր և միանգամայն զուարճալի և և հետաքրքրական ուսման քննիք, զանոնք իբր թէ ասկէ դարերով յառաջ մնած ու մեծցուցած կըլլանք: Այս գիտութիւններն ինչ նորանոր հորիզոններ չեն բանար մարդու աչքին առջև. ամբողջ արարչագործութիւնը կը ներկայացնեն անոր, աւարչարդործութիւնն իբր բոլոր գործանալուն երևոյթներուն մէջ, երկրին և երկնից գաղանիքները կը մերկանան անոր առջև. մարդս կը տեսնէ կը հասկնայ թէ այս աշխարհիս անհուն թառերաբեմին մէջ ինչ է ինքը, ինչպէս կապրի, ինչ են իւր շուրջն եղած բաները, ինչ առնչութիւն ունի իւր գոյութիւնը, բուսականաց կենդանաց և անգործաւ բանաւոր մարմնոց գոյութեան հետ: Բնապատմութիւնը որ հրահանգ իւր լայնօր հանգերձ միանգամայն խիստ զուարճալի գիտութիւն մ'ալ է, կուսուցանէ մեզ նախ թէ ինչ է կենդանին, ինչ է մարդը, ինչպէս կապրի, կը սնանի նա, ինչ մեքենականութիւն կայ իւր ներքը, նոյնպէս աշխարհիս այլ և այլ կրիաներուն մէջ ինչ բոյսեր, ինչ կենդանիներ, ինչ հանքեր կան. թէ ինչպէս ամենէն ահագին կենդանին ամենէն փոքրիկ միջատին հետ և ամենէն ահագին

ծառերն ամենաչնչին բոյսին հետ մէկ շղթայի մը օղակներ կը կազմեն և այլն, Այս գիտութիւնները մի միայն վերաբարական օգուտ մը չունին, այլ ամենահրաժեշտ կարեւորութիւն ունին երկրագործութեան, վաճառականութեան, շերտամատածութեան և այլն, և այլն: Առանց տեղեւորու շարժելու կրնամք իմանալ թէ աշխարհի ամենէն հեռաւոր գաւառաց մէջ ինչ կենդանիներ, ինչ բոյսեր և մատակներ կան որոցմէ կրնայ օգուտ քաղել մարդ: Երկրաբանութիւնը՝ այն սքանչելի գիտութիւնն է, որ զմեզ մարդոյն աշխարհի վրայ երեցած դարերէն շատ անգին կը տանի, անոր յապուշ կրթեալ աշայր առջև կը ներկայացնէ աշխարհիս գոյութեան այլ և այլ ժամանակաշրջանները, յորս գեո. բոյսը չկան, կամ կենդանիք չկան, և կամ այնպիսի անհեթեթ և ահաւոր կենդանիք կան, զորս մարդ չիրնար անգամ երեւակայել: Բնաբանութիւնը՝ տիեզերքը կաղմող նիւթոց ներքին յատկութիւններն և հիւլէրց այլ և այլ բազմակցութիւնքն մեզ բացատրելէ ի զգա՞մ յոգնաթիւ արհեստից անհամար ծառայութիւն կը մոտուցանէ: Բնագիտութիւնը նմանապէս կը բացատրէ մեզ աշխարհիս իւր ներդաշնակութեան մէջ պահող ուժերը, ընտանի օրնէ մեզ լուսոյ, ջերմութեան, երեքարականութեան, ձրգողութեան գաղանիքաց հետ: Շուրհ-

Լոնդոն 27 մարտ

Երեսփոխանաց ժողովին մէջ Սեր ըՍ. Թաֆթօր Նորթքոթ ըսաւ թէ բանակցութիւնը կը շարունակեն: Կաշնագրին խնդրութիւնը դեռ վերջնական կերպիւ որոշուած չէ, և կը մնայ մանաւանդ քննել թէ ինչ պայմաններով պիտի ստորագրուի: Վերջապէս ըսաւ թէ կը յուսայ որ Զատիկէն ետեւ աւելի գոհացուցիչ տեղեկութիւններ կրնայ տալ:

Սեր Սթաֆթօր Նորթքոթ Սեր Հէնրի Էլիօթի դէմ եղած անբարոյանութիւններն ալ հերքելով խնդրեց ժողովէն որ Թուրքիոյ մէջ եղած փոփոխութիւններն ներկայ դժուարութիւններն ալ ի հաշիւ առնու, և աւելցուց թէ Թուրքիա իւր ներքին վարչութիւնը բարեփոխու հարկը կը ճանչէ, և թէ բանութեամբ գինքն ստիպելու քաղաքականութիւնն իւր բոլոր ջանքերը կը չէզոքացնէ:

Կալկութա 28 մարտ

Հնդկաստանի փոխարքայն խաղաղական ատենախօսութիւն մ'ըրաւ, յայտնելով թէ իւր դրացեաց վրայ յարձակելու դիտարկութիւնն ընաւ չունի:

Պէրլին 28 մարտ

Իկնաթիէֆ զօրավարն հոս հասաւ, և անմիջապէս այցելութիւն տուաւ Պիամար իլխանին:

Ֆիթլիք 28 մարտ

Նարոյէն Պոնարաթի իլխանը մեաւ:

Լոնդոն 28 մարտ

Օտ. Բոնա.	12 5/8
Փոխ.	1865 13 3/4
»	1869 13 1/4
»	1871 31
»	1872 22 3/4
»	1873 12 7/8
» Եղիպտ.	51 3/8
Անգլ. Բոնա.	96 7/16

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Չ Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
16 մարտ. չորեքշաբթի իրիկուն	13.37
17 մարտ. հինգշաբթի առաւօտ	
Բացուեցաւ	13.32
Ժամ 6 1/2 րե	13.37
Բուժիկի երկաթուղեաց ֆր.	36 1/4
Թղթադարմ	140

ԸՆԹՅՈՒՆ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Կ. Պոլիս 16 մարտ	
Ստիճիթ Ժէնրալի բաժ. Անգլ. իր. 3.	6
» Փոխանականութեան	2.15
Կ. Պոլսոյ Պանքային	3.12
Քրէտի Ժէնրալ	3. 2
Քրէտի Օսթրո-Թիւրք	—

Կառքերը, հեռագրութիւնը, հեռադիտակը, լուսանկարը և այլ գարուս պարձանք առթող գիտեր և արհեստներ այս գիտութեանց շնորհիւ հնարուած և ծաղկած են: Ո՞վ, ինչ անհուն են այս գիտութիւնները. այս գիտութեանց ահագին չէնքը կառուցանելու համար հազարաւոր անձինք ճգնեւ, քրտներ և զոհ եղեր են:

Եթէ ասոնք չըլլային, մեք այժմ չպիտի կրնայինք ապօրին պատուհաններով լուսաւոր սենեակներու մէջ նստիլ, ինչպէս որ մեր նախնիք չէին կրնար նստիլ, և ինչպէս որ Հայաստան գեո. շատ տեղ չեն կրնար նըստիլ. չպիտի կրնայինք կտոր մը թուղթ գտնել վրան երկու տող բան գրելու համար. քիչ մը աչքերնիս տկարացած կամ ծերացած ասոն չպիտի կրնայինք ալ գիրք մը կարգալ, մանաւանդ որ գիրք ալ չպիտի կրնայինք գտնել, և մագաղաթաց ձեռագիր մը ձեռք բերելու համար ահագին գումարներ վճարելու էինք և այլն: Ներկայ դարուս մէջ ո՞վ որ այս գիտութիւններու զանց կընէ, անհատ թէ ընտանիք կամ աղք. անի հարստութեան, բարեկեցութեան երես տեսնելիք չունի, այլ միշտ ուրիշներէն պիտի կորոպտուի, ինչպէս մեք յեւրոպացւոց կը կորոպտուիմք:

Մշտնջուր Բոնա

Երբ վերադառնալէս պէր վեճէի փէշին խաղին ֆիլաթելլալ քայմէ օլարաք իթա քըլընմաք շարթըլլալ պէճէր արշընը 11 փարայա թալիպի էօհտէ սինտէ օլուպ մարաք բուսինին օն եւ տինճի փէնճէնպիճ կիւնիւ գարաքը գաթիսի վէրլիճէն յինտէն, իթա իթ մէյէ թալիպ օլանյարըն եւէվի մէյը քըլարտէ սաաթ եւտի բառտէլէրինտէ ճարի Շուրայի աքքէրլիյէ կէլմէլէրի :

14 մարտ 1877

Պապը Սէրապէրի 4
Պէճէր սէնէյի բուսինյէ մարաք իպ թիտաքնտան իթիպարէն՝ Նիդալիյէ անպարլէրինին տէվրի ուսուլ վէ նի զամը իպթիպարնտան պուլունմուշ, վէ իշպուլ տօգսան իւշ սէնէյի մարաքնըն իպթիտաք կիւնիւ նիդամը վէճէլիյէ անպարլէրին տէվրինէ միւ պաշէրէթ օլունմուշ օլմալլէ՝ էսճապը թալիպաթըն տօքսան իքի սէնէյի մարաքն ճէր նէ մըքարաք էրլաք վէ սայիր մաթլուպը վար իսէ, այնէն թայինա թըլալաք իսթէյէնլէրին տէվր միւտ տէթի կէլէր իսէ՝ մաթլուպլէրինին իսթիճալի, վէ տէվր միւտտէթի կէ շէր իսէ՝ մաթլուպլէրինին պէտէլէն պաճաքլէրի մալիւմէրի օլմաք իւղըն իլան օլունուր :

8 մարտ 1877

Պապը Սէրապէրի
Ի Լ Ա Ն

Շիրքէթի խալիյէ վաքորէրի իւ չին տէթիլ պին պէշ հիւղ քըլէ տօն եաղընըն պիլ միւնաքաթա մուպայեա օլունաճաղը ճիճէլիյէ պայիլէրինին վաղար էրթէրի վէ փէնշէնպիճ կիւն լէրի իտարէ մէճիսինէ կէլմէլէրի իլան օլունուր :

1292 մարտ 10

ՏՈՔԹՈՐ ԱՅԵՐԻ



ԱՆԿՈՆԵՑԻ ԵՒՐՈՊԱ

Արեան ապականութենէ յառաջ եկած բոլոր անտերը բուժելու աւանդէն աղէկ դեղն է : Ասիկայ շատ անուանի եղած է առաջնայինը մարթի վրայի վէրքեր, պալարներ ու խոցեր, նաև թուղու Պալիամ, Սըրաճա ու քէլ :

Ինչպէս որ վերոյիշեալ մարթի հիւանդութեանց նոյնպէս և արեան ապականութենէ ծնունդ առնող ներքին անտերաւ ալ մէկ հատիկ դեղ է : Ինչպէս են՝ քէլմիք Սըրաճա, Մալալու ու Պէլ աղբը և այլ անոնց նման հիւանդութիւններ : ու նաև լեարդի, ստամոքսի և երիկամանց վրայ եղած վէրքերը կըրժչկէ՝ եթէ ըստ կանոնի գործածուի :

Նաև եթէ վիշ մը տկարութիւն ունեցող անձինք աւ դեղէն գործածեն Ապրիլ ու Մայիս ամիսներուն մէջ, գալիք շատ հիւանդութիւններէ ազատ կըլլան :

Այս Շիրօպը այնպիսի բաղադրութիւն մի է, որ ոչ միայն արիւնը կըմաքըն, այլ նաև զօրացուցիչ է ու մարմնոյն ոյժ և կենդանութիւն կուտայ : Կանանց ամէն տեսակ հիւանդութիւններու խիստ օգտակար դեղ է և եթէ տիկնայք ժամանակին աւ դեղէն գործածեն, մեծամեծ չարքներու ու հիւանդութեանց առաջը առած կըլլան :

Կը ծախուի Միւնսթրա և Ընկերացի ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՃԱՌԱՏԱՆԸ մէջ որ ի Ղալաթիա ու բոլոր դեղաւաճառացիքը :



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԿԵՆԱԻՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1877 ՄԱՐՏ 1 ԵՐԵՎԱՆԻ ՕՐԻՆ ՍԿՍԵՄԼ

ՄԻՆՁԵՒ ՄԱՐՏ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԻՆԵՐԸ

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

Ժամ Երեւանի Երթի

3 45 Պէյիւքաթէն Պէյիւքաթ, Բաշապ, Գանլ, Ա. Հիսար, 49
Գանտ, Վանիք, Չէնիկ, Պէյիւք, Գուգիւնճուք :
3 45 Վանիք, Չէնիկ, Պէյիւք, Գուգիւնճուք : 2
(Բացի ուրախէ) :
10 20 Վանիք, Չէնիկ, Պէյիւք, Գուգիւնճուք : 25

ԿԱՄՈՒՐՁԵՆ ԵՒՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԻՆԵՐԸ

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի

Երեւանի Երթի